ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«14» օգոստոսի 2017 թվականի № 98-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի №96-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից իրականացվելիք՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար առաջարկվող ծրագրերի կատարողական հիմնական ցուցանիշները և ծրագրային բյուջետավորման համատեքստում վերանայված էլեկտրաէներգետիկ ոլորտի ռազմավարությունը հաստատելու մասին» №96-Ա հրամանի (այսուհետև՝ Հրաման) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3-րդ ենթակետով.

«3) Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ծախսակազմման ուղեցույցը՝ համաձայն հավելված №3-ի:»,

2) Հրամանը լրացնել նոր 3-րդ հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ